

ՔԱՋԱՍԻՐՏ ԹԱԳԱՒՈՐԸ

(Շար. տես. 1920 թվ. էջ 85).

Անտոնիոս ամօթապարտ վերադառնալով Սիրիա, Պարթևաց արշալանքէն, ուզեց ստալօդ յաղթութեանց լուրերով խաբել Հոռմի ժողովուրդն, և թերևս յաջողէր իւր նախորդ զօրավարներուն պէս, եթէ անոր ախոյեանն Հոկտաւիանոս, իւր փառասիրական նպատակներու համար՝ նախանձոտ աչքով Հոռմի դիտաւորեցէն՝ քայլ առ քայլ հետեւած չլինէր անոր աղետալի արշալանքին։ Նախ համբաւն ինքնին տարաւ հասուց ծագէ ի ծագ աշխարհի Անտոնիոսի պարտութեան լուրը. ապա Հոկտաւիանոսի կուսակիցներուն՝ որ սփռուած էին փոքր Ասիա և Ասորիք, որն յայտնի, որն ծածուկ, մանրապատում տեղեկութիւն կը հասցնէին առ Հոկտաւիանոս։ Անոնց մէջ ամենբլից աւելի կշիռը ունեցած են անշուշտ Գաշնակից թագաւորի տուած տեղեկութիւններն, յորում մի առ մի թուած լինելու է Անտոնիոսի գործած ռազմական և քաղաքական աններելի սխալները. որով նա յանցաւոր կը համարուէր հարիւր հազարնոց բանակի կոտորուելուն և ամօթին՝ որ ծածկեց Հոռմէական զէնքերը։

Սակայն նա խորագիտութեամբ թոյլ տուաւ հանդէսներ և շնորհակալութեան զոհեր մատուցուին դից « Պարթևաց զէմ տարած Հոռմէական յաղթութեանց համար »։ Այսպէս քաղաքականութիւնն բազմիցս զիտէ յօգուտ անձին զոհել ամենայն ճշմարտութեան։

Հոկտաւիանոս, սիրաշահելու ստիպուած էր զԱնտոնիոս՝ քանի որ ողջ էր Սեքստոս Պոմպէոս։ Սա հալածուած Սիկիլիայէն և Իտալիայէն՝ կ'անցնէր փոքր Ասիա։ Անտոնիոս ևս ոչինչ ընդհատ կասկածելով անոր փառասիրական ձգտումներէն, տեղակալներուն միջոցաւ կը հետապնդէ ձերբակալելու։ Սեքստոս գիտենալով թէ Արտաւազդ Հոկտաւիանոսի կողմն է և բարեկամ Պարթևաց, կը մտադրի անցնիլ Հայաստան և

Հարիենոս զօրավարի պէս ինքզինքն Պարթևաց թագաւորի ծառայութեան տրամադրել, որովհետև իւր հայրն, Մեծն Պոմպէոս, բարեկամ և դաշնակից եղած էր Պարթևաց։ Երբ կը յուսար թէ Հայոց և Պարթևաց բանակին դուրս անցած, պիտի կարենար վրէժ լուծել թէ Անտոնիոսէն և թէ Հոկտաւիանոսէն։ Այս խորհուրդը կը յայտնուի Անտոնիոսի և կ'անձապարէ մէջտեղէն վերցնել և կալանաւորել։

Անտոնիոսի ուշադրութենէն վրիպած պիտի չ'ըլլար Սեքստոսի ունեցած վստահութիւնն Արտաւազդի վրայ, և թէ դաւադրութեան մը որ կը ծրագրուէր Պարթևաց հետ վերանորոգելու իրեն ղէմ պատերազմը։ Ուստի զՍեքստոս դաւաճանօրէն կը սպաննէ, և միանգամայն կը կասկածի այնուհետև Արտաւազդի հաւատարմութեան վրայ ղէպ ի առ ինքն, ուստի միտքը կը ղնէ բարեկամութիւն կեղծելով՝ կալանաւորել զքաջասիրտ թագաւորը. վասն զի զէնքով փորձուել իրեն կործանումն էր։

Սեքստոսի մահուան, Հոկտաւիանոս և Անտոնիոս մնացին երկուքն յաղթական հրապարակի վրայ. ուստի ուրիշ բան չ'էր մնար, բայց եթէ երկուքն իրենց զէնքերն իրարու ղէմ դարձնէին, որոշելու համար թէ երկուքէն ո՞ր մէկն պիտի մնար տէր հոռմէական ինքնակալութեան։ Բայց ձեռք ձեռքի գալէն ստանջ, երկուքն պէտք ունէին իրենց բաժնի միջէն մաքրելու կասկածելի և փնտաւար տարրերը։ Մենք պիտի զբաղինք միայն Արեւելեան աշխարհներու գործերով։

Անտոնիոս հաւատարիմ հոռմէական առածին թէ՛ Ուր չի հաւերի. առիծեւ եին, պէտք է կարկատել աղոյսներ, փութաց ուժի ուժով նուաճեց զԱփրիկէ և Հրէաստանը. իսկ զՀայաստանը զէնքով գրաւելու սիրտ չբռաւ, վասն զի գործ պիտի ունենար Հայոց, Պարթևաց և Մաւրաց միացեալ ուժերու հետ։ Աղուիսենիով կարկատելու միջոցներու դիմեց՝ նպատակին հասնելու համար։ Քաղաքական պայմաններն և պահանջներն կը ստիպէին զԱնտոնիոս Արտաւազդի հետ հաշիւը վերջ-

նականապէս ուղղելու: Վասն զի Հոկտա-
ւիանոս Արեւմտեաց խաղաղորդ և Լուրիկէ
նուաներ էր և ուղղակի պատերազմի առիթ
կը փնտռէր զարմուելու իւր մրցակցի հետ:
Իսկ Անտոնիոս պէտք ունէր երկու բանի,
թիկունքէն ապահովել նախ Հոկտաւիանոսի
դէմ կռուող բանակը, երկրորդ պատերազմի
ծախսերուն համար գանձել հարկաւոր դրա-
մը: Այս երկու նպատակին հասնելու համար
հարկաւոր էր նուաճել զՀայաստան, ձեռ-
քաղելով զԱրտաւազդ և մեծամեծներն, և
գրաւել Հայոց թագաւորութեան գանձերն:

ԶԱրտաւազդ կալանաւորելու խորհուրդն
տեղի կ'ունենայ Աղեքսանդրիոյ մէջ, հե-
տեւալ պարագաներու բերմամբ:

Պարթևք և Մարք Հոռոմայեացոց աւարր
բաժնելու մէջ, զծտուելով իրարու հետ,
Մարաց թագաւորն երկիւղ կրելով մի՛ գուցէ
Պարթևք արշաւեն իւր երկիրն, կը դիմէ
կիլիկիոյ Պոլեմոն թագաւորին, որ Անտո-
նիոսի արշաւանքի ժամանակ գերի ինկեր
էր և Մարք խնայել էին անոր կենաց,
որպէս զի միջնորդ հանդիսանայ հաշտուե-
լու Անտոնիոսի հետ: Պոլեմոն Մարաց
հրեշտակներու հետ կ'երթայ Աղեքսան-
դրիա Անտոնիոսի հետ բանակցելու: Ըստ
վկայութեան Ստրաբոնի Անտոնիոս իսկ և
իսկ կը հաւանի հաշտուիլ և դաշնակցու-
թիւն մը կապել Մարաց հետ, համարելով թէ
անոնց ձիաւոր զօրքի օգնութեամբ, վերա-
նորոգելով Պարթևաց դէմ արշաւանքը,
կրնար ապահովապէս յաղթել անոնց:
Սակայն այս դաշնադրութիւնն թշնամական
բնոյթ մ'ունէր Հայոց արքային դէմ. վասն
զի Արտաւազդ կռուի մէջ էր Մարաց
թագաւորի հետ, զեռ Անտոնիոսի առաջին
արշաւանքի ժամանակէն, այս վերջին դաշ-
նադրութեամբ՝ Անտոնիոս կերպով մը թըշ-
նամի կը դառնար Արտաւազդի, որով
վերջնոյս կողմէն Սամուսատի դաշնադրու-
թիւնը կը խախտուէր: Իսկ Անտոնիոս չէր
կրնար չմտածել թէ՛ Հայոց թագաւորն
այս պարագային ուղղակի դաշնակցելով
Պարթևաց հետ, պիտի ստիպուէր ինքն
երկու ճակատի վրայ կռուիլ, հետեաբար
յաղթութիւնը մեծապէս վտանգի կ'են-

թարկէր: Ուստի այդ կնիւնն լուծելու
համար, առաջին անգամ դաւաճանական
խորհուրդ մ'եղած է Աղեքսանդրիոյ մէջ՝
կալանաւորելու զԱրտաւազդ: Մարք իրենց
արքունեաց սովորութեան հետեւելով, որոնք
երբեմն ուգեցին կնիւ ձեռքով դաւաճանել
և սպաննել զՏիրգրան Հայկազն, կը թե-
ւադրեն Անտոնիոսի բարեկամութիւն կեղ-
ծելով՝ խնամութեան առաջարկն ընեն
Արտաւազդին և հրաւիրեն յԱղեքսան-
դրիա: Բայց զրազէտ թագաւորն, որ իւր
մեծանուն հոր ջանքերով կատարելագոր-
ծուած էր յունական կրթութեամբ, կ'են-
թադրեմ թէ ուսումնասիրած էր նաեւ
Հոռոմայեացոց երկդիմի և խարդախ քաղա-
քականութիւնն, այս հրաւերի վրայ կը
սկսի աւելի զգուշութեամբ անձնապահ
լինել Անտոնիոսէ: Ոչ միայն Պոլեմոն, որ
աչք ունէր փոքր Հայոց վրայ, և Մարաց
թագաւորն, որ ճինխոյնդի էր Արտաւազդի
դէմ, որպէս թէ զրգոած ըլլար զԱնտոնիոս
արշաւելու իւր երկիրը. այլ ամենից աւելի
անհաշտ և վրիժառու զրգոողն զԱնտոնիոս,
հաւատադրուած լինելու առ Արտաւազդ, էր
Կլեոպատրայ որ զբաւած էր և կախար-
դած անոր միտքը և սիրտը. ըստ ասից
Պատմաւոր Մովսէս Խորենացւոյն. «Մ'որն-
չեալ առիւծաբար գազանութեամբ Անտո-
նիոս, ԱՌՈՒՅԷԼ ԵՒ ՅՈՒՆԵԱՆԻ Կլեոպատրայ,
նաեղի Գէն ՊԱՆԷՐ վասն լլկանաց իւրոյ
հանդն, որ ի Տիրգրանայ » (Գիրք. Բ. գլ.
ԻԳ): Այդ կնկայ համար Անտոնիոս ուրացաւ
իւր խիղճն, պատիւն և հաւատըն¹:

1. Երկուցեալ Մարաց Արքայի թէ Փրատտ ի ինդիբ
իցէ Երթոյ ինչ հակառակութեան, առ ունելոյ պատ-
րուակ ինչ արշաւանքի յիւր թագաւորութիւն, ըմբռնեալ
յայտ երկեղէ՛զ՝ զինաց նա առ Անտոնիոս: Պոլեմոն
արքայ Կիլիկիոյ և մասին ինչ Պոնտոսի (իմա Կապ-
պադովիոյ) եղև միջնորդ դաշնախօսութեանն ընդ զօ-
րազլինն հռոմայեացոց. իիիցայոյց նոյնպէս զԱնտոնիոս
ի թագաւորէն Հայոց, որը հաւատադրութիւն(!) տալա-
ւորեալ էր ի սիրտ նորա սաստիկ իմա իղծ վրէժխնդրու-
թեամբ(2):

Թագաւորն Մարաց ևս ոչինչ ընդհատ անձկայր կոր-
ծանան թագաւորին Հայոց, զոր համարէր նա ՊԱՏԱՆԻ
պատերազմին եղելոյ նմա յԱնտոնիոսէ: (Գիրք. Գրիք. Գ.
ԽԹ): Ուրէն հտ. Զ. էջ 520:

Հոս աւելորդ չեմ համարիր նշելու որ Դիոնի կասիրոսի գրածներէն հաւանական կը թուի թէ՛ Անտոնիոս Պարթևաց արշաւանքէն ի վերադարձին՝ յետ ութ հազար հոգի կորսնցնելու Հայոց վերին գաւառներուն մէջ, ֆիացածներուն համար հաւանութիւն ստացած է Արտաւազդէն, ձմերուկ տալու Ստորին Հայոց մէջ, որպէս զի գարնան վերստին ձեռնարկէին Պարթևաց դէմ նոր արշաւանքի մը:

Եւ յիշուի գարուն քաղցուելուն պէս նա կը չուէ Հայաստան՝ բոլորովին այլ դիտաւորութեամբ. առջևէն երկիցս և երիցս սուրհանդակ կը դրկէ Արտաւազդին, և վերջին անգամ Դիւլլուք, որ անոր մտերիմ բարեկամն էր, ստիպելու գալ միանալ իրեն հետ, ուզելով գեղեցիկ խոստումով և ՍՈՒՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՄԲ խաբել, իբր հարսանացնել կամելով անոր դուստրը իւր որդիներէն միոյն հետ:

Իսկ Արտաւազդ որ տեղեակ էր ծերակուտի և Հոկտաւիանոսի զործերու անցուղարձին, և թէ ինչպէս Անտոնիոս սկսեր էր Հռոմի ժողովրդեան առջև համարուիլ իբր հապարակաց թշնամի, անոր համար որ կ'ուզէր Հռոմայ իշխանութիւնն փոխադրել Աղեքսանդրիա և յանձնել Կլէոպատա րայի ձեռքը, և ինքն, իբր բարեկամ և զաշնակից Հռոմի ժողովրդեան, զաղտնի պայմաններով ևս կապուած ըլլալով Հոկտաւիանոսի հետ, չէր ուզեր հաւատալ ստապատիւր բարեկամութեան մը, և միշտ կը խուսափէր Անտոնիոսի ընկերութենէն որ անպատիւ և անուանարկ եղած էր կնոջ մը սիրոյն գերի լինելոյն համար:

Մինչ Անտոնիոս առջևէն հրաւիրակներ կը դրկէր Արտաւազդին, ինքն իւր զօրքով իբրն քաղկեամ և Կաշնակից կը հասնէր մինչև Հայաստանի սիրտն: Ապահով զգալով որ Արտաւազդ այնուհետև ոչ միջոց և ոչ ժամանակ կ'ունենար զենքով դիմադրելու իւր ոյժին: Հոն աղուփսու մորթին վար ձգելով, թախանձանքին հետ կը խանէ սպառնալիքը, կը սկսի առիւծաբար մոնչել գազանութեամբ, որով ստիպուած Արտաւազդ ի վերին երեսս վատահուծիւն կեղ-

ծելով, բոլոր ընտանեօք և մեծամեծներով կու գայ ընդ առաջ Անտոնիոսի, կարծելով թէ այնպիսի պատրաստութեամբ՝ շահի բիրտ զօրականի սիրտը, այլ ի զուր յուսաց: Վասն զի Անտոնիոս, փոխանակ արքայի դստեր ձեռքը ուզելու, անոր դրամները կը սկսի պահանջել. և իսկոյն շղթայի պարկած Արտաւազդը այնպէս Հայոց բերդերը կը դիմէ՝ ուր պահուած էին արեւուն գանձերն: Սուտ խոստումներով՝ կ'առաջարկէ պահպանողներուն, որ եթէ յանձնեն զանձերն, կ'ազատէ զարքայն: Հաւանական է թէ ի սկզբան մասամբ յաջողած ըլլայ Անտոնիոս, բայց յետոյ Հայոց Աւագանին հասու լինելով խաբէութեանը կը թագաւորեցնեն զԱրտաշէս երէց որդին: Անտոնիոս կը ստիպուի դիմաւր վար առնել. և կը սկսի յայտնի պատերազմ Հայոց դէմ, այն զօրքերով որոնք մի տարի առաջ սովալլուկ անցեր էին Երասխը, և համբուրեր էին Հայոց հողը, և որոց մի մասն, ինչպէս յիշեցինք վերև, Անտոնիոս խնդրած էր Արտաւազդէն թոյլ տալու ձմերելու Հայաստանի մէջ: Այդ զօրքերն որ Հայոց արքայի համեղ հացով կշտացեր և կեանքերինն ազատեր էին, ապերախսութեամբ՝ կեանք տուողի կեանքն դաւաճան ձեռքերով կը վերցնեն: Հռոմէական Գալլու կաթով անած սկուռններէն « աւելի մարդասիրութիւն » սպասելն անստուծիւն էր: Բայց պարզամիտ Հայն՝ ոչխարի պէս գայլը տեսնալուն պէս, վրան կը վազէ փոխանակ խուսափելու, ինչպէս կ'ընեն միւս չորքոտանիք վտանգի ժամանակ:

Արտաշէս՝ բնական է յաղթուեցաւ բռնաւորի գերակշիռ ուժէն և փախաւ Պարթևաց մօտ. Անտոնիոս զիրութեամբ տիրեց Հայաստանի, և զարձաւ Կլէոպատային ընծայելու զԱրտաւազդ և իւր ընտանիքն և յաղթանակի հանդէսը կատարելու:

Հռոմի սովորութիւնն էր ՅԱՂԹԱՆԱԿ շնորհել այն զօրավարներուն՝ որոնք որոշ չափով նոր հողեր կ'աւելցնէին Հռոմի տէրութեան. արդ Անտոնիոս տիրելով Հայաստանի, զայն հրատարակեր էր Հռոմէական գաւառ. ուստի իրաւունք կը

համարի Հոռմէն յաղթանակ կատարելու հրամանը խնդրել:

Շատ հասկանալի է թէ Անտոնիոս այս իրաւունքը ստանալու համար իւր ՀԱՒԱՏԱՒԻԹԻԹԻՆԸ և Պարթններէն կրած պարտութիւնը արդարացնելու համար, վերև յիշած Արտաւազդի դասալըութիւնը Մարաստանի ճակատէն, երկարօրէն ամբաստանած և փաստարանած ըլլալու էր իջերակուտի առջև: Բայց Հոռմի մէջ ոչ ոք հաւատք ընծայեց անոր խօսքերուն, և Մեքականոյն Հնաւանեցած յաղթանակի իրաւունքը շնորհելու: Սակայն Անտոնիոս ի հեճուկա Հոռմի՝ զայն կատարեց Աղեքսանդրիոյ մէջ:

Պլուտարքոս այսպէս կը համառօտէ այս եղերական միջոցակէն.

«Սակայն յետ ժամանակաց պապ միեալ միւսանգամ Անտոնի յաշխարհն Հայոց, և բազում խոստամարք և հրաւիրանօք ածեալ ամոքեալ զնա զալ առ ինքն, կալաւ զնա և կապեցաւ և տարաւ յԱղեքսանդրիա, ուրանօր և յաղթանակեաց: Բայց ընդ յաղթանակին հանդէս նորա մեծապէս խոժոռեցան Հոռմայեցիք. քանզի զգեղեցիկ հանդէսն և զհոյակապ զնոցուն հայրենեաց՝ ետ ընծայեաց նա իջգիպտացւոցն ի շնորհս կղզոպատրեայ: Այլ այսորիկ յետոյ ուրեմն պատահեցին» (Պլուտ. Անտ. էջ. 182):

Անտոնիոսի ապերախտութիւնն և հաւատարմութիւնն առ ազգն Հայոց և առ Արտաւազդ, ամենավատ տպաւորութիւն ներգործեր էր Հոռմի ժողովրդի վրայ: Նոյնպէս իւր մերձաւոր բարեկամներն նկատելով անոր բարոյական անկումն, սկսած էին հեռանալ և անցնիլ Հոկտաւիանոսի կողմն: Անոնց մէջն էր նաև Դեյլոս, որ պատմագրի համբաւ ստացեր էր, և Անտոնիոսին հաճոյանալու համար ստապատիր կերպով նկարագրած էր Պարթններու դէմ ըրած արշաւանքն, յորում իբր միշտ յաղթող հանդիսացած լինէր Անտոնիոս: Թեւ իրերը էր նաև Արտաւազդի կեղծ դասալըութիւն կամ հաւատարմութիւնը, իբր զլիաւոր պատճառ բռնելով հոռմայեցւոց պարտութեան: Դեյլոս եթէ կարելի է ասել,

հաւատարմութ լինելով առ Անտոնիոս, և անցնելով Հոկտաւիանոսի կողմն, անկեղծօրէն խոստովանած լինելու է Արտաւազդի անպարտաւ ընթացքն և հաւատարմութիւնն առ զաշխարհն և Հոռմէական ժողովուրդն, և համոզիչ խօսքով հաւաստած է նաև Անտոնիոսի նենգ զնացքն և հաւատարմութեան ժութիւնն առ արքայն Հայոց: Անոր համար է անշուշտ որ Հոկտաւիանոս կանխաւ թէ և բոլոր ուժով կը հակառակի Անտոնիոսի առաջարկութեան յաղթանակ կատարելու, ի վարձատրութիւն Հայաստանի նուաճելուն, սակայն դեռ չի համարձակիր հաւատարմութ հռչակելու զԱնտոնիոս, ինչ որ պիտի տեսնենք, Դեյլոսի կեսարու կողմն անցնելէն յետոյ, Ակտիոնի ճակատամարտէն յառաջ իրեն զինուորներուն ըրած բանախօսութեան մէջ ուժով մը պիտի շեշտէ:

Անտոնիոս Հայաստանի գրաւումով կը լրացնէր իւր ձեռքի տակ եղած գաւառներու միութիւնը, և շատ մը փորձիկ զաշխարհից թագաւորութիւններ, որոնք կը խոստատան յին Հոկտաւիանոսի դէմ ընկիւր կռուին՝ զենքով և մարդով օգնել: Ուստի Անտոնիոս արհամարհելով Հոռմի իշխանութիւնը, հանդիսօրէն կատարեց յաղթանակը Աղեքսանդրիոյ մէջ: Այդ շքեղ թափօրի միջէն կ'երթային զթապակապ Հոռմայեցւոց զաշխարհից և բարեկամ թագաւորներ և իշխաններ, որպէս պատերազմի գերիներ, յորս կը գերազանցէր Հայոց թագաւորն Արտաւազդ և իւր որդիք:

Այդ եղածի վրայ սաստիկ զայրացաւ Հոռմի Մեքականոյն, հրատարակեց զնա թշնամի Հայրենեաց, և Հոկտաւիանոսի յանձնեց հայրենիքի պաշտպանութիւնը: Ակտիոնի յաղթութիւնն զՀոկտաւիանոս տէր կացուց Հոռմէական ինքնակալութեան: Անտոնիոս մեռաւ կլէպատորայի ծնգաց վրայ, տանելով գերեզման պարտութեան ամօթն և հաւատարմութեան նախատինքն:

- Զ Ո Ի Պ Ա Կ Ե Ի Ռ

Մինչև ցայս վայր գրուածէն որոշ եզրակացութիւն մը հանելու համար հարկ

կը համարիմ Արտաւազդի և Անտոնիոսի բարոյից նկարագիրն պատկերելու հակիրճ բանով, որով հասկանալի լինի թէ՛ որն յերկուցն ընդունակ էր նենգութեան և հաւատարղութեան:

Արտաւազդի մասին մեր խորհնացին երկու հակասական ծանօթութիւն կու տայ Բ. Գրքի ԻԲ. գլխի մէջ, Առաջին թէ՛ «այլ ոչ ինչ գործ արութեան և քաջութեան եցոյց»։ Երկրորդ՝ խիզախելով Անտոնիոսի դէմ արտօրեամբ և քաջարեամբ կռուելով՝ «հալածական առնէ զգօրս Հոռմայեցոց» Հայոց Միջազետքէն:

Թող զայս, խորհնացին Արտաւազդի մասին կը յաւելու. «գրմաստութենէ և զքաջութենէ անփոյթ արարեալ» են, կը թուեցուցանէ թէ պղերգութեան և որկրամոլութեան տուած է ինքզինքն: Մինչդեռ Յունական կամ Հռոմէական պատմիչներն ընդհակառակն կը գովեն յիմաստութեան մասին, և թէ զանազան երկասիրութիւններ զրած է յոյն լեզուով, զորս կը յիշեն Պլուտարքոս և Ապպիանոս. և այս ոչ փոքր պարծանք մ'է ըջախարիտ Թազաւորի համար:

«Բայց այլ ոչ ինչ գործ արութեան և քաջութեան եցոյց. այլ ուտեիաց և ըմպելաց պարապեալ, մօրից և հղեզնապուրակաց Թափառեալ շրջէր և առապարաց, գիշավայրիս և զխոզս արածելով. գիմաստութենէ և զքաջութենէ և զքարի յիշատակաց անփոյթ արարեալ, ծառայ և ստրուկ արդարեւ որովայնի լինելով, զաղբիս մենացուցանէր»:

Խորհնացու գրածներու միտքն հասկանալու և ասածներու ճիշտն և թիւրն որոշելու համար, հարկաւոր է երկու բանի միտք դարձնել: Առաջին յիշելու է Տակիտոսի ըրած գիտողութիւնները Հայոց բարեբրու մասին. Սա կ'ըսէ թէ Հռոմի մէջ սովորած և կրթուած Արշակունի հայ իշխանները կայսեր հաճութեամբ Թազաւոր կարգուելով Հայաստանի, իրենց արքունեաց մէջ բարեփոխութիւններ կ'ուզէին մտցնել, հետեւելով Հռոմէական սովորութեանց. իբր սիրողը յառաջագիմութեան և քաղաքակրթութեան: Սակայն Նախա-

բարներէն շատերուն, որոնք հակեալ էին դէպ ի Պարթևներն, հաճոյ չէին այդ նորութիւններն: Նոցա կը սիրէին իրենց նախնեաց սովորութիւնները, բարեբրը և աւանդութիւններն. ինչպէս էին ձիավարել, որսի երթիլ, ընդհանրապէս զինուորական շարքաշ կեանքով ապրիլ: Երեկ Արտաւազդ յունասէր բարք ունենալով, ունեցեր է իրմէն սովորացողներ և զանգատողներ Նախարարներու մէջէն, և որոնք ունէին իրենց Տանուտէրական զօրագունքն: Մեզ թուի զայս կ'սկսնարէ խորհնացին ըսելով. «Սա (Արտաւազդ) բասրելով յիւրոց զօրացն վասն առաւել պղերգութեան»։ — Հետեւապէս խորհնացու գրածներն, Տակիտոսի գրածի մտքով դատելով, կը կորսնցնեն իրենց ոյժն և արժեքն:

Աւելի ևս անճիշդ պիտի թուի, երբ մտաբերենք թէ Արտաւազդ աշխարհակալ հօր մը զաւակն էր, որ իւր մեծ հանճարով կը գնալանցէր ժամանակակից Թազաւորներն, անշուշտ անոր խնամքով գեղեցիկ կրթութիւն մը ստացած էր որդին: Յունական մատուցողութեամբ և ճաշակով զարգացած միտք մը, զոր բազմն օժտեր է հոգւոյ և մարմնոյ ազնիւ ձիւրքերով, աշխարհաւէն հօրը երկար Թազաւորութեան ժամանակ, թերեւս անձնական զուարճութեանց տուած է ինքզինք, զրախնութեամբ զրադելով, Թատերախաղերով և գունաններու ընկերութեամբ անցուցեր է երիտասարդուն թիւին, և անով պատճառ տուած է թերեւս մի քանի խստապահանջ և աւանդապահ հայերուն՝ զրպարտելու զնա իբր «զբարի յիշատակաց անփոյթ, ծառայ և ստրուկ որովայնի»։ Մեզ կը թուի առաւելապէս թէ խորհնացու պատմածն՝ կը վերաբերի Արտաւազդի կեանքի ամենափայլուն շրջանին, երբ նա կրասոսի սպառնալիքն արհամարհելով կը դաշնակցի Պարթևաց հետ և իւր ջոյրը Զարուհին կու տայ արքայորդի Պակորոս քաջ երիտասարդին: Ըստ բանից Պլուտարքոսի երկու Թազաւորներու խնջոյքներն և զինբրուքն քիչ մը յաճախ, քիչ մը երկար տեւելով, ուրիշներու համբերութիւնն հատեր է, առ նա-

խանճու քան թէ ճշմարտութեամբ՝ բասերը են իմաստուն և քաջասիրտ թագաւորը: Լուսաբանութեան համար կ'առաջադրենք մեր ընթերցողներուն բնագիրը:

«Այլ զայնու ժամանակաւ հաշտութիւն խօսեալ էր Հիւրովդ ընդ հայկազինն Արտաւազդայ, և ամեալ ևս էր զգոյր նորաւ կէն որդոյ իւրում Պակորոսի. ուստի և խնճու և գինեբրուս պատրաստէին նոքա միմեանց, և շատ ևս սփոփութիւնք հեշտալուրք Ելլադացի ականջաց. քանզի և ոչ անհմուտ ինչ էր Հիւրովդ լեզուին և զպրութեանցն Հելլենաց: Իսկ Արտաւազդ ինքնին և Ողբերգութիւնս ևս քերթեալ ունի, և Ճառս և արժանազրեալ Պատմութիւնս, յորոց կէսք կան և մինչև ցայսօր»:

Արտաւազդ իւր փեսայի և դստեր ուրախութեան մէջ կորովի ձեռքով սուրի դաստակէն բռնած ունէր, և երբ բաղդախնդիր Հոռմայեցին Միջագեացը փորձեց խել Հայոց ձեռքէն, Արտաւազդ, « ԶԱՅՐԱՅԵԱԼ՝ հրաման տայ զօր յարուցանել, ... Խաղայ իշանէ ի Միջագետս և ՆԱԱՄԱԿԱՆ անէ զօրոց Հոռմայեցոց »: Խորենացին ինքզինքն կը ջրէ:

Իսկ Անտոնիոս յերիտասարդութեան ապականուած կեանք մ'ունեցած է. Պրտաւորքս կը գրէ. « Ի մտերմութենէ Կուրիովնի պազըտի առն և հեշտասիրի, իրրե և ժանտախտէ վարակեցաւ պատանին, զոր և ամուր ևս յարդարել զնա՝ հրապուրեաց Կուրիովն անձնատուր ի գինեբրուս լինել և ի պրոնկանոցս և ի բազմաշուայ ծախսն և յաղկատանսն »...: Անտոնիոսի մայրն զորդին կը հեռացնէ Կուրիովնէն. բայց յետոյ « Անտոնիոս գնացեալ յարեցաւ վայր մի ի Կղովղիոս, այր լիբր առաւել և ապիրատ ևս քան զամենայն որ ի ժամանակին մարդահաճոյց խոժանին՝ որ ժպիրհ յանդգնութեամբն վեր ի վայր գործեաց զամենեան »: (Պ. Անտ. էջ 102-3) Իսկ կատարեալ հասակին մէջ գործածներուն համար, կը գրէ նոյն Պրտաւորքոս թէ՛ Պարթևաց արշաւանքին պատրաստութեանց մէջ, նա այնքան տարուած էր

տոփական ցանկութեամբ Կլէոպատրայի « որ յողջախոհ խորհրդոց անտի կարծէր նկուն և թմրեալ... ոչինչ առաքինացաւ ողջախոհ մտածութեամբ, այլ խելաթափ... անքնթիթ ականկառոյց ի սիրուհի անդ »: Ակտիոնի ճակատամարտի մէջ անգամ խելքը Կլէոպատրայի հետ է, թողած ճակատը կնոջ հուսնէ կը վազէ. « Իսկ Անտոնիոս այնուհետեւ յայտնի իսկ նշաւակեալ զանձն, ոչինչ առաքինացաւ, ոչ իրրե և իշանն և ոչ իրրե մարդ. և ոչ վայր մի իմաստնացաւ այրն ի խորհուրդս իւր, այլ (ըստ որում ասաց ոմն ընդ խաղ, եթէ՛ Հոգի սիրողին կեայ ի մարմին օտարին) այնպէս ձգեալ քարշեցաւ նա ի կնոջն յայնմանէ »: Ակելի աղտեղիներն ի բաց կը թողունք չլիրաւորելու համար ընթերցողի մարդը սիրտը:

Ահա զլիսաւոր պատճառներէն մին որ Արտաւազդ միշտ ատեց և խուսափեց Անտոնիոսի բարեկամութենէն. վասն զի ոչ իշխանի ազնուականութիւնն ունէր և ոչ մարդու արժանապատուութիւնը, որով ընդունակ էր գործելու ամենայն ոճիւր:

Արտաւազդ՝ վերանորոգելով իւր Մեծ հօր զաշնադրութիւնը և նիգալկեցութիւնն Հոռմայեցոց հետ, մինչև կեանքի վերջն՝ նոյն անյղիլ կամքին վրայ մնաց և արդեամբք ցոյց տուաւ թէ՛ Կրասոսի ժամանակ՝ իւր բարի և օգտակար խորհուրդներով և թէ՛ Անտոնիոսի՝ երբ ջախջախուած բանակովն ապաստանեցաւ Հայաստան: Ասկեց վերջը երբ Անտոնիոս Արեւելքի մէջ սկսաւ հակառակ Հոռմի քաղաքականութեան գնալ, Կլէոպատրայի սիրոյ համար, Արտաւազդ իւր բարեկամութիւնը կը նորոգէ Հոկաւախանոսի և Հոռմի Մեքակուտի հետ: Գիտնալով հանդերձ թէ այս բանի համար Անտոնիոս պիտի ոխակալուի իւր դէմ և չարիք մտածէ իրեն համար, նա քաջասրտութեամբ անդրդուելի կը մնայ իւր ՊԱՏԻՈՑ խօսքին, նաեւ մահու վտանգին մէջ: Թէ և մարմնով կալանաւորուեցաւ, բայց ազատ հոգին չղրծեց իւր հաւատքին:

Անտոնիոս տղայ հասակէն մինչև ցմահ

մնաց նոյն «գոռոզ և ամբարտաւան բար-
քով և վարքով, և մնոտիւրպանծ և յեղ-
յեղով և փառախնդիր» (ՊԼ. Անտ. էջ
103)։ Նա յառաջ քան իւր հաւատադրու-
թիւնն առ արքայն Հայոց, ուզեց նոյն-
պէս դաշնախօսութեան պատրուակով նն-
գել Պարթևներուն ալ. մանաւանդ ըսելու
է թէ՛ նա դաշինքը իրր թղթի կտոր ոտնա-
կոխ քրաւ։ «Թէ՛ ընծայեմք մեք հաւատս
Փշորոսի, եղև անդ և ԴԱՇՆԱԿՐՈՒԹԻՒՆ
ինչ ի մէջ Անտոնիոսի և արքային Պար-
թեաց, որով քաջ իսկ երեի թէ՛ զօրագուին
հոռմէական արար յայտնի դոժողորիսն,
զոր չէք արդարացուցանել» (Իսովն. հտ.
2. էջ 482)։ —

Արտաւագդին անշուշտ տեղեկացուցած
էին Պարթևներն, թէ իրենց և Անտոնիոսի
միջև եղած դաշնագրի պայմաններն, որով
սահմաններն որոշուած էին երկուքին մէջ.
որը պէտք էր գիտենալ Արտաւագդ,
որովհետև երկու կողմերուն ինքն ալ
սահմանակից էր։ Ուստի երբ Անտոնիոս
դրժեց իւր դաշինքին, Արտաւագդ կրնա՞ր
հաւատադրու՞մ բարեկամին օգնութեան եր-
թալ, մինչ միւս բարեկամներն՝ Պարթևներն՝
իրենց դաշինքին վրայ հաւատարիմ կը
մնային։ Ոչ անշուշտ։

Հարկաւոր համարինք յիշել դարձեալ
Պլուտարքոսի զուգակշիռն ընդ Դեմետր և
Անտոնիոս։

Դեմետրիոս կասկածելով Աղեքսանդրի
նենգութեան վրայ, ինքն կը կանխէ և կը
սպաննէ զնա իւր տան մէջ հացի սեղանի
վրայ։ Վատութեան վերին ծայրն է սա։
Եթէ Դեմետր քաղաքական նպատակ մը
ունեցած չլլար, տիրելու Մակեդոնիային,
չպիտի սպաննէր զԱղեքսանդր։ Անհիմն
քսութիւններու հաւատարմով միայն քա-
րեկամ սպաննել՝ անհաւատարի է։

Անտոնիոս նոյնպէս եթէ աշխարհակա-
լութեան տենչն ու անյագ ընչաքաղցու-
թիւնն և յաղթանակելու փառասիրութիւնը
չունենար, նա իւր բարեկամի կեանքին չէր
նենգեր։ Վասն զի եթէ իսկապէս հաւա-
տադրու՞մ և դասալիք եղած լինէր Արտա-
ւագդ, Անտոնիոս իսկոյն կը կալանաւորէր

դասալիք «մատնիչը» և դաշտին վրայ
«հրացանագարկ» կ'ընէր, ըստ Պարոն
Բասմաճեանի դատողութեան։ Ընդհակա-
ռակն՝ ձերբակալելու առաջին նպատակն
էր նուաճել գերել Հայաստանը և Հայոց
թագաւորի և մեծամեծներու զանձերը
կողոպտել, երկրորդ սրբել Պարթևներէն
կրած պարտութեան ամօթն, շղթայակապ
տանելով զԱրտաւագդ կլէռպատրային,
հաւատացնելու համար թէ նա եղած էր
պարտութեան պատճառը։ Քանի որ կը
յուսար օգուտիւ անոր շղթայներէն, պահեց
ի դիպահոջ, բայց երբ կորակոր դարձաւ
Ակտիոնի մարտէն, վախնալով որ Հոկտա-
ւիանոս զնա կրնայ դարձնել իւր թագա-
ւորութեանը, սպաննել կու տայ։ Ահա թէ
ն՛ր է ծածկուած մարդասպանի ոճիրն և
հաւատադրութիւնն։

Պլուտարքոսի մէջ Արտաւագդին վերա-
գրուած հաւատադրութիւնը ըստ մեր կարի
սպացուցինք թէ եկամուտ էին և թէ
հաւանականաբար Դելլոսի գրչի արդիւնք։
Եւ չենք կարծեր թէ սխալած ըլլանք.
վասն զի նոյն Դելլոսն՝ լքելով զԱնտոնիոս
և անցնելով Հոկտաւիանոսի կողմն, սա
անպատճառ կամեցած է իմանալ իրի ստու-
գութիւնն և հաւատած պիտի ըլլայ Անտո-
նիոսի հաւատադրութիւնը, որով Ակտիոնի
կուռի ճակատը յարգարելու ժամանակ,
ուղղելով խօսքը առ ունկնդիր զօրավար-
ներն և զինուորներն, որոնց մէջ գուցէ
ներկայ էին շատ մը մասնակցողներ Պար-
թեաց արշաւանքին, անցնողներ Երասխը
և համբուրողներ ԵփՅԱՆԿ ԱՇԽԱՐՀԻ հողն.
համարձակութեամբ Անտոնիոսի երեսին կը
զարնէ անոր հաւատադրութիւնն և կը
հարցնէ. «Իսկ հաւատարմութիւնն նորա
առ դաշնակիցս և ո՞րք ոչ գիտէ որով
հնարիւք կալաւ նա զարքայն Հայոց յետ
պտրեքոյ զնա խաբէութեամբ»։ և շարու-
նակելով խօսքը. «Ի դէմս հարկանէ Ան-
տոնիոսի թէ՛ սպան զԱլեքսանդր, որում
ասէր յառաջնմէ իրր թէ՛ ներեալ էր նմա,
և թէ՛ էարկ վատաւամբաստութեան մեծ գո-
ղովրդեամբն Հռոմայ, խաբէութեամբ ձեր-
բակալ արարեալ զարքայն Հայոց և արկեալ

գնա ի շղթայա » (Դիոն. գիրք Ծ. 91. 9)։

Այսպիսի հեղինակաւոր անձնաւորութեան բերանով եղած հանդիսաւոր յայտարարութենէ վերջը, և առաջի այնպիսի վկաներու, որոնք գիտուորք էին Անտոնիոսի բանակի մէջ, այլ ևս կարելի է տարակուսիլ թէ բուն մեղապարտ և հաւատադրուծն եղած ջրլլայ ինքն Անտոնիոս. ապա թէ ոչ մէկն կամ միւսն մօտէն կամ հեռուէն պիտի ստէին Հոկտաւիանոսի ամբաստանութիւններն. ա. մենքն լռեցին, ուրեմն համոզուած էին անոր խօսքերու ճշմարտութեանը, մանաւանդ թէ ասանք, խոջներն իսկ յառաջագոյն համոզուած էին և գիտէին Անտոնիոսի դաւաճանութիւնը։ Ուրեմն կարելի է այլ եւս հանդուրծել որ սուրը և զրպարտութիւնը շարունակէ նսեմացնել և արատաւորել քաջասիրտ և հաւատարիմ արքայի անբասիր կեանքը, օրինակելի քաղաքակաւորութիւնը։ Գոնէ Հայոց պատմութեան էջերէն պէտք է ջնջուին հոռմէական վատասիրտ զօրավարի չարամիտ առասպելաբանութիւնքն։

Պ. Բասմաճեան, հուսկ ուրեմն, հաւան չէ որ մենք զԱրտաւազդ կոչեցինք Քաջասիրտ թագաւոր, որովհետեւ նորա երեակայութեան մէջ սպաւորուել է, հաւատ ընծայելով Պլուտարքոսի մէջ սպրդած և կամուտ կտորներուն, իբր թէ Արտաւազդ պատերազմի ճակատը լքել դասալիք եղել է, հետեւապէս վատասիրտ եղած է քան քաջասիրտ։

Մենք քաջասիրտ բառը կրկին իմաստով կ'առնունք Արտաւազդի մասին. մէկն նկատելով իբր Զօրական, միւսն իբր իմաստասէր։ Իբրեւ Զօրական իւր քաջասրտութիւնն ցոյց տուած է Անտոնիոսի, երբ սա հինաբար կը մտնէ Հայոց Միջլազետը գրաւելու մտքով։ Արտաւազդ ԶԱՅԱՅԱՅԱ եղածի վրայ, իւր և դաշնակից զօրքը ժողովելով կ'իջնայ Արշակետը, կը հաւածէ հոռմէական զօրքերը և աչքովը կը տեսնայ վատասիրտ քարեկամի փախուստը։ Երկրորդ՝ իբրեւ իմաստասէր՝ քաջասիրտ հանդիսացաւ երկայնատութեամբ տանելով

նենգաւոր և դաւաճան դաշնակցին, իրեն հասուցած վիրաւորանքը և անարգանքը։ Թշուառութեան և նեղութեան մէջ կ'երևի մարդու հոգւոյ մեծութիւնն։ Բռնաւորի բանեցուցած հնարքներն՝ սպառնալիքներն և փառաքանքները, երբէք չ'ազդեցին անոր վսեմ և հպարտ հոգւոյն վրայ։ Գիտակից իւր պատուոյն, իւր անստգիտ խղճի վկայութեան վրայ, վեհանձնօրէն արհամարհեց կլէտպատրայի շուքն ու փառքն, որուն առջև դաւաճանը և հաւատադրուծը ստըրկաբար կը սողար, և իւր օրինակով ուրիշներէ երկրպագութիւն կը մուրար։ Այն իստմամբ Հրապարակի վրայ, միայն Հայոց սէջ արքայն Արտաւազդ, իւր կուրիւններն չորս կողմէն առած, աղիւծենի հերպպանծ գլուխն թափ տալով՝ կլէտպատրայի և Անտոնիոսի, սոսկ անունները տալով, երեսուն կու տար անոնց դաւաճանութիւնն և վատութիւնն։ Հոն բռնաւորի երեսներն թոշնեցան, ծռեցաւ գլուխն թուլցած պարանոցի վրայ, զգաց իւր պարտութիւնը, աւելի մեծ և աւելի ամօթալի քան Մարտատանի ամայի և անբեր դաշտերուն մէջ։

Ահա Քաջասիրտ թագաւորի պատկերն իւր ամենայն վեհութեամբ և գեղեցկութեամբ և հոռմայեցի վատասիրտ զօրավարի տգեղութիւնն, որ իւր յագուրդը կ'առնու հաւատարիմ դաշնակցի արիւնը քամելով՝ և ստութեամբ դրամներու վրայ դրոշմելով Հայաստանը գերուած։ Armenia capta.

Այս, վայրկեան մը միայն հրճեցաւ Անտոնիոս իւր յաղթանակի համար. այլ անչառ Պատմութեան դատաստանն աւելի հանդիսաւոր կերպով պիտի դամէ այսուհետեւ անարգութեան սինին՝ իւր նենգաւոր բարեկամութիւնը և հաւատադրութիւնը։ Կալանաւորեց նա զՀայաստան, բայց անոր համար՝ Հոռմ միայն ամչցաւ։

«Արքայ նա հանդէս յաղթանակի, ընդ որ ամաչէին արդեօք նախնի զօրագլուխ հռովմայեցւոյ... Անդ տարեալ եղև կապուտ կողոպուտ Հայաստանի։ Անդ երեսցաւ Արտաւազդ կալանաւոր, ծանրաբեռնալ ոսկի շղթայիւք, իւր ամենայն ընտանեօք

և բազում աւագանւով իւրոյ թագաւորութեան և առհասարակ յոտս մատուցանելու պատրաստայ, որ զիւրե ունելով փողփողեալ պալատական և բազմութիւն յոյժ ժողովրդեան՝ էր բազմեալ ի գահոյն ոսկի, ընդ որով և պատուանդան արծաթի։ Միտք Անտոնիոսի էին, զի իւր կալանաւորը մատուցեն խոնարհական մեծարանս թագուհոյն Եգիպտոսի, և առաջի անկանիցին նորա, զոր անհնար հոգ ընդունել ի սէզ գողցուլթենէ նոցա։ Արտաւազդայ և յայս պիտում յետին խոնարհութեան յուշ լինէր՝ թէ որդի էր մեծի թագաւորին Տիրանայ. ոչ յանձն առնոյր, ոչ ծունը կրկնել առաջի կղէպատրայ, և ոչ ի խօսին ընդ նմա՝ տալ այլ անուանակոչութիւն՝ բայց միայն զիւր անուն» (Ռու. Հտ. 2. էջ 522)։

Աղբըսանդրոյ Հրապարակին մէջ Մեծին Տիրանի որդւոյն այդքան ազնուական և արհամարհական կերպն՝ զարմացուց և սիրելի ըրաւ հանդիսականաց։ Անտոնիոս միայն զիտակից իւր գործած եղեաւ, մահացաւ և զլորեցաւ Արտաւազդի ոտքի տակ. Բարոյապէս մեռած էր նա։ Ու այն վայրկեանէն կը սկսէր Քաջասիրտ թագաւորի յաղթանակն։ Եթէ երէք զեռ տարակոյս մնայ Անտոնիոսի հաւատարմութեան և զործած ոճիրի մասին, շնորհքի հարւած (Coup de grâce) Տակիրտոսի վերապահուած է. նա իւր Տարեգրութեան ամէն ժամանակի իմաստուններէ զովուած է իբրեւ օրինակ պատմագրի և որ ամենայն ուրեք ի պատմութեան իւրում սիրելի առնէ զառաքինութիւն, և ատելի գլուխութիւն»։ Եւ թէ գիտենք նոյնպէս թէ՛ նա համակիր չէր Հայոց, այլ այնու հանդերձ անպատրուակ կերպով Անտոնիոսի ըրածը կը կոչէ եղբուն, քրէական յանցաւոր. «Իսկ մեռնեալ... տարակուսեալ տատանէր վասն Եղեմիւն Անտոնիոսի, որոյ նենգաւ բարեկամութեան կալեալ զԱրտաւազդ արքայ Հայոց, և արկեալ ի շղթայս, և սպանեալ էր» (Տակ. Գիրք Ա. գլ. Գ.)։ Թէ և Պլուտարքոս Դեմետրի հետ ըրած Զուգակոյն մէջ, Անտոնիոսի երգմանարարեան և ուստաղծարեան յանցանքը մեղմելու թեթեւա-

ցուցիչ բացատրութիւն մը գրած է «Պատմառա իմն ունել Անտոնիոսի» և այլն. սակայն Տակիրտոսի այս վճռական լեզուն ցոյց կու տայ թէ անհիմն է ինչ որ առհասարակ ասեմ, և չէ ՀԱՌԱՍԱՅԱՄ Արտաւազդին մատնիչ լինելուն, ինչպէս և մեք իսկըզբանէ անտի։

Շնորհակալ ենք Պարոն Բասմանեանին որ պատեն առիթ տուաւ մեր հայրենասիրական զգացումներուն յազուրդ տալու, և զրեցինք այսչափս, նպատակ դնելով պաշտպանելու ճշմարտութիւն և Քաջասիրտ թագաւորի անստգիւտ քաղաքական կեանքը, ընդդէմ կարգ մը հռոմէական վարձկան պատմագիրներուն. որոնք նպատակն զրած էին իրենց շնչին գործերը մեծցնել, կեղծել, փառաւորել և տարածել, մինչ ընդ նմին ստերով, զրպարտութիւններով, մեղադրութիւններով, փոքրացնել, նսնմացնել և արատաւորել իրենց հակառակորդ կամ բարեկամ, դաշնակից կամ թշնամի ԱՅՐԱՏ ԵՒ ԱՅԱՆՏ հոյակապ գործերը, համբաւը և ազգային սովորութիւնները։

ՄԵՐՈՒ ՇԻՐԱՍՏ

ԱՆԻՄԱՆԻՄԱՆԻՍՏԻՍՏԻՆ. — Երեկայ համաշխարհական պատերազմի ժամանակ Խաւիոյ թագաւորն ՎԻԿՏՈՐ ԵՄՄԱՆՈՒԷԼ Գ. կոտորեալ իւր հին դաշնակիցներու դէմ. որ եթէ էսթրէութեամբ գերի բռնուէր, Աստորիացին զեռ հրացանազարկ պիտի ընէր կոնակէն։ Բայց Վիտորիոյ—Վենետոյ և Պիաւէի գեղեցիկ յաղթութիւնն, անմահ պատկով բոլորեց Քաջասիրտ թագաւորի ճակատը։ Եթէ ներքին է ասել, Խաւիոյ թագաւորի կողմէն ոչ միայն «հաւատարմութիւն» եղաւ, ըստ գատարման և հասարակաց կայծթիքին Գերմանական և Աստորիական թերթերուն, զոր գիտէ նաև հմուտ Պատմագէտը՝, այլ և կոտեցաւ անոնց դէմ, ինչ որ չէր ըրած Արտաւազդ։ Արդ Խաւիոյ ՔԱՅԱՆՏԻՍ թագաւորն, որ չորս տարի՝ կոտի ճակատի վրայ երեցաւ օրինակելի զինուոր մը, եթէ ի դար յետոյ Պարոն Բասմանեան կամենար զատուոր հանդիսանալ, արդեօք զատուի՞ք մը պիտի ճաննար և դատէր, Արտաւազդին պէս՝ արժանի հրացանազարկ լինելու թէ՛ պիտի համոզուէր մեզի հետ, որ Գաւազրութիւնն և Հաւատարմութիւն եղաւ երկու կերպրական կայսրութիւններէ, և թէ անոնց կանխատուածուած ծրարքի մէջ կը մտնար fas aut nefas Խաւիոյ նուաճումն և բաժանումն։
